

քեան մէջ: Մէկ անգամ միայն, իր ամուսնութենէն երկու տարի վերջ, 1656 Յունիս 28ին, իր քահանայ հօր հետ միասին աներօջը այցելութեան երթալը կը յիշէ. «Սա եւ Տէրատէրն իմ գնացաք յաներանցս (էջ 192):

Երեմիա Մահտեսի Ամբակումի նման բարեպաշտօն ու առաքինի հայրագրի մը ու պաշտպանի մը խնամքին ու հովանաւորութեան ներքեւ երջանիկ ու խաղաղիկ ընտանեկան բոյն մը կազմեց, որուն անդորրութիւնը չվրդովեցաւ երբեք, ու Աստուած օրհնեց իրենց միութիւնը պարգևելով երեք արու և մէկէ աւելի աղջիկ զաւակներ: Ասոնց անդրադառնալու առիթ պիտի ունենանք ետքէն:

Յայտնի չէ սակայն թէ Երեմիայի կեանքի ընկերը քանի՛ տարի ապրեցաւ. անոր մահը Երեմիայէ առաջ պատահեցաւ թէ ետքը. միայն դիտենք թէ 1690 Գեկտ. 27ին, այսինքն իրենց ամուսնութենէն 34 տարի, 7 ամիս և 5 օր ետք տակաւին կ'ապրէր ան: Իրենց մանկամարդ աղջիկը Սողոմէ, որուն մասին պիտի գրենք յետոյ, նոյն օրը կը վախճանի: Այդ առթիւ Երեմիա իր յօրինած Գանձին (Յաւ. էջ 627-32) կը կցէ թուրքերէն Ողբ մը՝ ննջեցեալին բերնէն դիմառնաբար իր ի կեանս եղող մօրը ուղղուած. «Նէնէ պէնի սիզ աղլաման սըզլաման» (էջ 632-4):

Երեմիա գտնուելով անչափահաս տարիքի մէջ՝ տակաւին չէր կրնար զործնական մասնակցութիւն ունենալ այդ ժամանակին Կ. Պոլսոյ մէջ յուզուող ազգային-եկեղեցական խնդիրներուն, թէև իբրև ուշիմ ու հետաքրքիր պատանի՝ հեռուէն կամ մօտէն կը հետեւէր օրուան անցուդարձերուն, ներկայ կը գտնուէր ժողովներու և յարաբերութիւններ կը հաստատէր հուզեորական ու աշխարհական յայտնի անձնաւորու-